ՄՇԱԿՈՒՅԹԻ ԷԼԻՏԱՐ ԱԿԱԴԵՄԻԱՆ

Գեղեցիկին հաղորդակցվելու, գեղարվեստի արժեքը գնահատելու, գեղեցիկն արարելու նպատակով 1945թ. հիմնադրվեց Երևանի գեղարվեստի պետական ակադեմիան՝ ակադեմիկոս, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ ***Արա Սարգսյանի*** ջանքերով:

Այստեղ են դասավանդել և կրթօջախի կայացմանը մեծապես նպաստել ճանաչված նկարիչներ Մ.Սարյանը, Էդ. Իսաբեկյանը, Հ. Կոջոյանը, Բաղդասարյանը, Հարությունյանը... Այս կաճառի մշակութային բազմատարածությունն տանող ճանապարհով են անցել գրեթե բոլոր հայ հանրահայտ նկարիչները, ովքեր իրենց արվեստով հիացրել ու շլացրել են ոչ միայն Հայաստանում... 1994-ից Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտորն է պրոֆեսոր ***Արամ Իսաբեկյանը,*** մարդ, ով ունի ազգային և պետական մտածողություն:

Ճանաչված նկարիչներ Էդուարդ Իսաբեկյանի և Արփենիկ Նալբանդյանի որդին լինելով, Ա.Իսաբեկյանն ինքնուրույն է ընտրել իր կյանքի ճանապարհը՝ նկարչությունը, քանի որ այդ շնորհը նրան տրված է եղել ի վերուստ: 1976թ. ավարտելով ԵԳԹԻ-ի գեղանկարչության բաժինը, նրա աշխատանքներում ի հայտ են եկել խիստ անսովոր, զուսպ գամմայով՝ ընդգծված չափավորությամբ և մանրակրկիտ արված նկարներ:

1979թ. դասավանդելով նույն բուհում, արժանացել է դոցենտի, պրոֆեսորի կոչման: Մասնակցել է բազմաթիվ հանրապետական, միջազգային ցուցահանդեսների: Հայաստանի նկարիչների միության անդամ է (1982թ.), 1983-98թթ.՝ նկարիչների միության գեղանկարչության բաժնի վարիչ, եղել է այս ինստիտուտի պրոռեկտորը: Հաճախ լինելով Փարիզի, Վենետիկի թանգարաններում ու պատկերասրահներում, ստեղծել է հետաքրքիր ու յուրօրինակ նկարների շարք:

Զարմանալիորեն կարծես բնական հուշեր արտահայտեն «Նամակ Ամերիկայից», «Աշունը Սևանում», «Խաբուսիկ անդորր» և այլ նկարներ, նատյուրմորտները, դիմանկարները: Պատահական չէ, որ նրա նկարները գտնվում են Երևանի ազգային պատկերասրահում, Երևանի ժամանակակից արվեստի թանգարանում, Էջմիածնի, Հրազդանի, Դիլիջանի, Սարտուևու պատկերասրահներում և բազմաթիվ անհատական հավաքածուներում:

Ստեղծագործող նկարիչը նաև գործունյա ռեկտոր է, ձեռնամուխ է եղել գեղարվեստի ակադեմիայի շենացման գործին ստեղծել անհրաժեշտ լաբորատորիաներ, ցուցասրահ և ինստիտուտի թանգարան, կապեր հաստատել Ռուսաստանի, Գերմանիայի, Իտալիայի, Բուլղարիայի գեղ. ակադեմիաների հետ:

Մշակույթի էլիտար այս բուհն ունի 2 ֆակուլտետ՝ ***կերպարվեստի*** [գեղանկարչություն, գծանկարչություն (գրաֆիկա), քանդակագործություն, կերպարվեստի պատմություն և տեսություն], ***դիզայնի և դեկորատիվ-կիրառական արվեստի*** (դիզայն, մետաղի գեղարվեստական ձևավորում, ոսկերչություն, արծաթագործություն, խեցեգործություն, արդյունաբերական գրաֆիկա, բատիկա, հագուստի մոդելավորում): Շատ բաժիններ նոր են (նախկինում կար միայն գեղանկարչություն, քանդակ, գրաֆիկա և դիզայն):

Վերջերս էլ, ժամանակին համահունչ, բացվել է «համակարգչային գեղարվեստական նախագծում» բաժինը, որը, ճիշտ է, բավականին ծախսատար է, բայց ռեկտորն ամեն ինչ անում է, որպեսզի այդ ասպարեզում էլ նվաճման





հասնեն: 800-ից ավելի (100-ից ավելի արտասահմանցի) ուսանողների համար ստեղծված են ստեղծագործելու բոլոր պայմանները: Մեծ ուշադրություն է դարձվում նրանց աշխարհայացքի ձևավորման ու գեղագիտական ըմբռնումների զարգացմանը:

Շարունակությունը՝ էջ 3

...ԷԼԻՏԱՐ ԱԿԱԴԵՄԻԱՆ

Սկիզբը՝ էջ 1

Գեղանկարչության ամբիոնում մեծ ուշադրություն է դարձվում պլաստիկ անատոմիային, նյութերի տեխնոլոգիայի ուսումնասիրմանը: Այս բուհում դասավանդում են մեծահամբավ դասախոսներ, պրոֆեսորներ Մ. Սեդրակյանը, Ս. Մուրադյանը, Մ. Գրիգորյանը, Էդ. Վարդանյանը, Ա. Իսաբեկյանը, Ա. Գրիգորյանը, Թ. Միրզոյանը, Գ. Բաղդասարյանը, Ա. Շահինյանը, Տ. Հակոբյանը, Վ. Արամյանը, Գ. Աղասյանը, Հ. Մամյանը, Ա. Պետրոսյանը, Մ. Ալթունյանը, Գ. Ղազարյանը, դոցենտ Թ. Գևորգյանը...

Դիլիջանում և Գյումրիում գործող մասնաճյուղերում ուսանողները ևս ստանում են հիմնավոր գիտելիքներ և թափանցում արվեստի գաղտնիքների մեջ:

- Պարոն Իսաբեկյան, որտե՞ղ են անցկացնում ուսանողները պրակտիկան:

- Դիլիջանում, որտեղ նկարում և ուսումնասիրում են բնության առանձնահատկությունները: Արդեն տարածք ունենք Սևանում, ուր այսուհետ բուհի ուսանողները կգնան և հանգստի, և՛ պրակտիկայի:

- Իսկ ի՞նչ կասեիք ստեղծագործությունների ցուցադրման մասին:

- Պետք է նշեմ, որ մեզ համար կարևորը ցուցահանդեսային գործունեությունն է, ինչի համար էլ կառուցեցինք պատկերասրահ, որը բուհը չուներ: 4-րդ տարին է՝ հաջողությամբ օգտագործում ենք այդ ցուցասրահը և 15 օրը մեկ կազմակերպում ցուցահանդես, որտեղ հիմնականում մեր ուսանողների աշխատանքներն են: Ուրախությամբ նշեմ, որ մեր ուսանողները մասնակցում են նաև միջազգային ցուցահանդեսների. օրինակ՝ վերջերս Բոստոնում ցուցադրվեցին մեր մոդելի բաժնի 3-4 ուսանողների աշխատանքները և մեծ հաջողություն ունեցան:

- Այսօր մեր կառավարությունը մեծ ուշադրություն է դարձնում առողջ ապրելակեպին՝ ֆիզկուլտուրային և սպորտին: Ինչպե՞ս եք իրականացնում Ձեր ուսանողների ֆիզիկական դաստիարակությունը:

- Ճիշտ է, շատ կարևոր հանգամանք նշեցիք, բայց ի սկզբանե, ցավոք, չի եղել ֆիզկուլտուրայի բազա՝ մարզադահլիճ, գույք և այլն, ինչն էլ մեր մտահոգությունն է: Ունենք սեկցիաներ, և մեր դասախոսները պարապմունքներն անցկացնում են այլ բուհերի բազաներում: Շնորհակալ եմ ընկերոջս՝ ՀՊՖԻ-ի ռեկտոր Վահրամ Առաքելյանին, ՀՊՃՀ-ին՝ իրենց դահլիճները տրամադրելու համար: Ունենք ֆուտբոլի թիմ, որը մասնակցում է տարբեր առաջնությունների և բավականին հաջող խաղում: Պետք է ասեմ, որ չենք բավարարվում դրանով, քանի որ պարզապես անընդունելի է ֆիզկուլտուրան և սպորտը աչքաթող անելը...

- Իսկ ի՞նչ քայլեր եք ձեռնարկում այդ ուղղությամբ:

- Դա գումարների հետ է կապված, քանի որ մեր շենքային պայմանները շատ սուղ են: Բայց պետք է աշխատենք հասնել արդյունքի, չնայած այդ դժվարությունն ունենք:

- Ձեր հայրը՝ պրոֆեսոր Էդուարդ Իսաբեկյանը, հեղինակություն ու համբավ է վայելում: Պատմեք նրա մասին:

- Հայրս շուրջ 60 տարի, գեղարվեստի բուհի ստեղծման օրվանից, դասավանդել է և նրա ուսանողներից են Գրիգոր Խանջյանը, Սարգիս Մուրադյանը, Անատոլի Պապյանը, Մկրտիչ Սեդրակյանը և շատ նշանավոր արվեստագետներ: Ես նրան համարում եմ մեծ նկարիչ: Անցած տարի նկարիչների միությունում բացվեց ցուցահանդես նվիրված նրա 90-ամյակին, որտեղ ներկայացված էին վերջին տարիների նրա գրաֆիկական աշխատանքները, որոնք չէին ցուցադրվել: Ցավոք, նա արդեն 4 տարի է չի տեսնում և չի նկարում: Հասարակության և պրոֆեսիոնալների կողմից շատ լավ ընդունվեց նրա գիրքը, այժմ էլ ցանկություն ունի գիրք գրելու նաև Երևանի մասին, ունի արդեն հավաքած նյութեր: Ուրախությամբ պետք է նշեմ, որ վերջապես լույս տեսավ իրեն արժանի ալբոմ, որի հրատարակմանն օգնեց ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը: Որոշում կայացվեց քաղաքապետարանի կողմից, որ հիմնադրվի թանգարան (շենքը կա, ուղղակի պետք է վերանորոգվի), ինչի համար իմ երախտիքի խոսքն եմ ուղղում ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանին և Երևանի քաղաքապետ Երվանդ Զախարյանին:

Հուսով ենք, որ դեռևս շատ առիթներ կունենանք հպարտանալու մեր նշանավոր արվեստագետներով, ովքեր իրենց բնատուր ընդունակություններն են բացահայտում և կատարելագործում ամուր հիմքերի վրա և հուսալի ձեռքերում գտնվող Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում:

Մանվել Կիրակոսյան